ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԱՐՓԻ ԳԱԳԻԿԻ

ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԻՇԵԼ ՖՈՒԿՈՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Ս. Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Ա. Միրզոյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Գ. Բաբաջանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. հունիս 10-ին՝ ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. մայիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Լ. Ղարագուլյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունն ու հրատապությունը: Սուբյեկտի ձևավորման հիմնահարցը դարեր շարունակ փիլիսոփայական մտքի առանցքային թեմաներից է եղել: Դասական փիլիսոփայության շրջանակում սուբյեկտը դիտարկվում էր որպես ինքնաբավ, ինքնագիտակցությամբ օժտված բանական էություն: Դեկարտյան *cogito*-ն հաստատում էր մտածող «ես»-ի աներկբա առաջնահերթությունը, իսկ կանտյան տրանսցենդենտալ սուբյեկտը ներկայացվում էր որպես փորձառության միավորող և իմացության հնարավորության պայման: Այս տեսանկյունից սուբյեկտը դառնում էր այն կենտրոնը, որի շուրջ կառուցվում էին գիտելիքը, բարոյականությունը և քաղաքական կարգը:

20-րդ դարի երկրորդ կեսից այդ ընկալումն արմատապես փոխվեց: Սուբյեկտը սկսեց դիտարկվել որպես պատմականորեն պայմանավորված համակառույց (կոնստրուկտ), որը ձևավորվում է դիսկուրսիվ, ինստիտուցիոնալ և կարգավորող գործառույթներով: Հետևաբար սուբյեկտն այլևս չի ընկալվում որպես ինքնաբավ և կանխորոշված էություն, այլ որպես հարաբերական և կառուցվող գոյություն:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 21-րդ դարի սոցիալ-տեխնոլոգիական զարգացումները փոխել են հենց սուբյեկտի ձևավորման պայմանները: Թվայնացումը, տվյալահեն կառավարման համակարգերի զարգացումը, ռիսկերի կանխատեսման մեխանիզմների տարածումը, կենսաբժշկական չափումների և վարքագծային պրոֆիլավորման ընդլայնումը ստեղծել են նոր միջավայր, որտեղ սուբյեկտի կառուցումն այլևս չի սահմանափակվում միայն տարածական վերահսկողության և ինստիտուցիոնալ կարգավորման տրամաբանությամբ:

Եթե կարգապահական և կենսաքաղաքական հասարակությունների ձևավորման շրջանում, ինչպես դրանք վերլուծված են ֆրանսիացի փիլիսոփա Միշել Ֆուկոյի աշխատություններում, սուբյեկտի ձևավորումը (կառուցումը) հիմնականում տեղի էր ունենում տարածական վերահսկողության և բնակչության կարգավորման միջոցով, ապա արդի տեխնոլոգիական պայմաններում կարելի է նկատել կառավարման տրամաբանության որոշակի տեղաշարժեր՝ ժամանակի կազմակերպման, հավանականության մշակման և ապագա վարքի կանխատեսման մեխանիզմների ընդլայնման առումով: Տվյալահեն և ալգորիթմային միջավայրերում սուբյեկտն ավելի ու ավելի հաճախ է ներգրավվում չափման, գնահատման և պրոֆիլավորման գործընթացներում, ինչը տեսական հարցեր է առաջադրում սուբյեկտայնության կառուցման նոր պայմանների վերաբերյալ:

Ժամանակային կարգապահության, կանխատեսական կառավարելիության և տվյալահեն կարգավորման արդի պայմաններում անհրաժեշտ է նորովի վերլուծել սուբյեկտի կառուցման տրամաբանությունը, նրա մարմնականության կարգավիճակը և բարոյական պատասխանատվության հնարավորությունները: Առանց նման վերլուծության՝ հնարավոր չէ ամբողջապես պատկերացնել ժամանակակից ինքնության և ազատության սահմանների փոփոխությունն իշխանական միջավայրում:

Սույն հիմնահարցն արդիական է հատկապես հայաստանյան սոցիալական միջավայրում, որտեղ վերջին տարիներին ակնհայտորեն զարգանում են ինստիտուցիոնալ գնահատման, կարգավորման և թվայնացման մեխանիզմները կրթության, առողջապահության, իրավունքի և վարչարարության ոլորտներում: Այս հանգամանքին անդրադառնալն այս աշխատությանը հաղորդում է ոչ միայն տեսական, այլև կիրառական նշանակություն:

Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը: Սուբյեկտի ձևավորման խնդիրը ժամանակակից փիլիսոփայության և հասարակագիտության առանցքային ուսումնասիրության առարկաներից է: Հենց Ֆուկոյի աշխատություններում է ձևավորվել այն քննադատական լեզուն, որի միջոցով սուբյեկտը սկսեց դիտարկվել ոչ թե որպես ինքնաբավ էություն, այլ որպես դիսկուրսիվ, ինստիտուցիոնալ և կարգավորող տեխնոլոգիաների ներգործությամբ «կառուցվող» գոյություն: Կարգապահական իշխանության, կենսաքաղաքական կարգավորման և ինքնաձևավորման տեխնոլոգիաների վերլուծությունները հնարավորություն տվեցին սուբյեկտին դիտարկել որպես պատմականորեն ձևավորվող և իշխանական հարաբերություններով կառուցվող հիմք:

Ֆուկոյան ժառանգությունը հետագայում զարգացվեց տարբեր ուղղություններով: Ժ. Դելյոզը մատնանշեց կարգապահական փակ տարածքներից անցումը դեպի վերահսկողության ցանցային և շարունակական միջավայրեր[1]: Ջ. Բաթլերը սուբյեկտի ձևավորումը ներկայացրեց իբրև կատարողական և նորմատիվ կրկնությամբ կայացող գործընթաց[2], իսկ Ջ. Ագամբենը կենսաքաղաքական իշխանությունը

[1] Առավել մանրամասն տե՛ս **Deleuze G.**, Foucault, trans. S. Hand, Minneapolis, University of Minnesota Press, 1988; **Deleuze G.**, Postscript on the Societies of Control// *October* 59, Cambridge, MA, MIT Press, 1992:

[2] Առավել մանրամասն տե՛ս **Butler J.**, Bodies That Matter: On the Discursive Limits of "Sex", New York, Routledge, 1993; **Butler J.**, *Giving an Account of Oneself*, Fordham University Press, New York, 2005; **Butler J.**, *The Psychic Life of Power: Theories in Subjection*, Stanford, Stanford University Press, 1997:

վերաիմաստավորեց բացառության և «մերկ կյանքի» տրամաբանությամբ[3]: Ն. Ռոուզը և այլ հեղինակներ վերլուծեցին նեոլիբերալ կառավարման ռացիոնալությունները, այսինքն՝ այնպիսի կառավարման տրամաբանություններ, որոնցում անհատը դիտարկվում է որպես ինքնակառավարվող, պատասխանատու և ռիսկերը հաշվարկող սուբյեկտ: Նրանք ցույց տվեցին, թե ինչպես է ինքնակառավարումը և պատասխանատվությունը վերածվում կարգավորման մեխանիզմների: Այս ուսումնասիրություններն էականորեն ընդլայնեցին տեսական միտքը սուբյեկտի կառուցման վերաբերյալ:

Միաժամանակ՝ վերջին տասնամյակների սոցիալ-տեխնոլոգիական զարգացումները նոր շերտ են ավելացրել սուբյեկտայնության վերլուծությանը: Թվայնացման, տվյալահեն կառավարման և կանխատեսական ալգորիթմների տարածման պայմաններում սուբյեկտի ձևավորումն աստիճանաբար ներառում է չափման, պրոֆիլավորման և ռիսկերի հաշվարկման մեխանիզմներ: Ժամանակի կառավարումը, հավանականության մշակումն ու ապագայի հաշվարկը դառնում են կարգավորման կարևոր գործիքներ: Սակայն առկա գրականության մեջ այս տեղաշարժը հաճախ դիտարկվում է հատվածական՝ որպես արագացման մշակույթ, թվայնացման հետևանք կամ վերահսկողության ընդլայնում՝ տեսականորեն չհամադրելով այն սուբյեկտի կառուցման ամբողջական տրամաբանության հետ:

Առկա գրականության մեջ հատկապես թերի է մնում երեք փոխկապակցված հանգույցների համակարգված տեսական մշակումն ու համադրումը: Առաջին՝ ժամանակային կարգապահության խնդիրը հազվադեպ է ներկայացվում որպես իշխանության ինքնուրույն տեխնոլոգիա, որի դեպքում վերահսկողության առանցքը ներկայության վերահսկումից փոխդրվում է դեպի ապագայի հնարավոր ընթացքի կառավարում: Երկրորդ՝ տվյալայնացված մարմնի հարցը հաճախ քննարկվում է թվայնացման համատեքստում, սակայն չի դառնում սուբյեկտի ձևավորման ընթացքի կառուցվածքային վերափոխման քննություն: Երրորդ՝ հետկենսաքաղաքական պայմաններում սուբյեկտի բարոյական դիրքը հիմնականում սահմանափակվում է ինքնախնամքի կամ ինքնակառավարման խնդիրներով՝ առանց փոխադարձ պատասխանատվության տեսական մոդելի հստակ ձևակերպման:

Պետք է նշել, որ հայաստանյան գիտական դաշտում Ֆուկոյի աշխատությունների նկատմամբ հետաքրքրությունն աստիճանաբար աճում է. հայերեն են թարգմանվել նրա երկու աշխատությունները («*Հսկել և պատժել*» (2003 թ.), «*Գիտելիքի հնագիտություն*»

[3] Առավել մանրամասն տե՛ս **Agamben G.**, State of Exception, trans. K. Attell, Chicago/London, The University of Chicago Press, 2005; **Agamben G.**, Homo Sacer: Sovereign Power and Bare Life, trans. D. Heller-Roazen, Stanford California, Stanford University Press, 1998:

(2022 թ.)), իսկ սուբյեկտի, իշխանության և ժամանակակից հասարակության կառուցվածքի հարցերը քննարկման առարկա են դարձել հայ հեղինակների՝ Էդ. Հարությունյանի, Վ. Միրզոյանի, Ս. Պետրոսյանի, Գ. Սողոմոնյանի, Ս. Զաքարյանի, Ն. Մկրտչյանի, Ա. Ղարագուլյանի, Մ. Դեմիրճյանի, Օ. Նահապետյանի, և այլոց հոդվածներում[4]: Մասնավորապես Ս. Պետրոսյանն անդրադարձել է ինքնախնամքի խնդիրներին՝ Դավիթ Անհաղթի հոգու խնամքի փիլիսոփայական վերլուծության համատեքստում[5]: Այնուամենայնիվ, հայալեզու և հայրենական փիլիսոփայական գրականության մեջ սուբյեկտի ձևավորման խնդիրը ժամանակային կարգապահության, կանխատեսական կառավարելիության և տվյալայնացված մարմնի փոխկապակցված հարթությունում դեռևս չի ստացել համակարգված և ամբողջական տեսական մշակում:

Այսպիսով՝ թեև սուբյեկտի և իշխանական միջավայրի փոխկապակցվածության հարցը լայնորեն ուսումնասիրված է ինչպես Ֆուկոյի սեփական աշխատություններում, այնպես էլ նրան նվիրված հիմնարար մենագրություններում (Գ. Դելյոզ, Հ. Դրեյֆուս և Պ. Ռաբինոու, Բ. Հան, Թ. Լեմկե, Ն. Ռոուզ, Ս. Ռաֆնսո, Կ. Վիլադսեն, Մ. Դին, Շ. Զուբոֆ, Դ. Գամեզ, Դ. Պանագիա, Կ. Կուպման և այլք)[6], ժամանակակից տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ վերափոխումների պայմաններում այն պահանջում է նոր տեսական համադրումներ և վերլուծական հստակեցումներ: Սույն աշխատությունը կառուցել ենք հենց այս գիտատեսական հենքի վրա՝ նպատակ ունենալով շարունակելու և միաժամանակ ընդլայնելու սուբյեկտի ձևավորման քննադատական վերլուծությունը ժամանակային, կանխատեսական և տվյալահեն կառավարելիությամբ օժտված հասարակության պայմաններում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակը սուբյեկտի ձևավորման ժամանակակից պայմանների փիլիսոփայական, մեթոդաբանական վերլուծությունն է այն տեղաշարժի համատեքստում, որով իշխանությունը կարգապահական և կենսաքաղաքական մոդելներից աստիճանաբար անցնում է դեպի ժամանակային, կանխատեսական և տվյալահեն կառավարելիության գործակարգերի (ռեժիմների): Աշխատանքում նպատակ ունենք բացահայտելու, թե

---

[4] Առավել մանրամասն տե՛ս Հարությունյան Էդ. (2023), (2024), (2025), Միրզոյան Վ. (2017), (2021), (2025), Պետրոսյան Ս., (2017), (2000), (2026), Սողոմոնյան Գ. (2017), (2018), (2025), Զաքարյան Ս. (2021), Մկրտչյան Ն. (2015), (2022), (2025), Ղարագուլյան Ա. (2024), Դեմիրճյան Մ. (2019), Նահապետյան Օ. (2022):

[5] Առավել մանրամասն տե՛ս **Պետրոսյան Ս.**, Դավիթ Անհաղթի հոգու իմաստասիրությունը և արդիականությունը, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2017:

[6] Առավել մանրամասն տե՛ս Deleuze G.(1988), Dreyfus H. & Rabinow P. (1982), Veyne P. (2011), Lemke T. (2011), Rose N., (1996), (1999), Han B. (2002), Oksala J. (2008), Raffnsøe S. (2008), (2016), (2018), Villadsen K. (2014), (2017), Dean M. (1994), (2010), Zuboff Sh. (2019), Gamez D. (2023), Panagia D. (2020), C. Koopman (2019):

ինչպես են կառավարման փոփոխվող տեխնոլոգիաները վերաձևավորում սուբյեկտի կառուցման տրամաբանությունը, մարմնի կարգավիճակը և պատասխանատվության հնարավորությունները, ինչպես նաև ցույց տալու, թե իշխանական հարաբերություններն ինչպես են վերասահմանում սուբյեկտի դիրքը այդ գործընթացում:

Այս նպատակին հասնելու համար մեզ համար նախանշել ենք հետևյալ կարևոր տեսական և գործնական խնդիրները.

- վերլուծել սուբյեկտի ձևավորման ֆուկոյան՝ ոչ -մարդաբանական մոտեցման հիմքերը և պարզաբանել դրանց տեսական նշանակությունը ժամանակակից սուբյեկտայնության ըմբռնման համար,
- բացահայտել կարգապահական իշխանության և կենսաքաղաքական կառավարման կառուցվածքային առանձնահատկությունները՝ որպես սուբյեկտի ձևավորման պատմական գործակարգեր,
- տեսականորեն հիմնավորել «ժամանակային կարգապահություն» հասկացությունը՝ ցույց տալով վերահսկողության առանցքի տեղաշարժը տարածական կարգավորումից դեպի ապագայի հաշվարկ և ռիսկերի կառավարում,
- ուսումնասիրել կանխատեսական և տվյալահեն կառավարելիության մեխանիզմները՝ վերլուծելով ալգորիթմիկ միջավայրերում սուբյեկտի կառուցման առանձնահատկությունները,
- քննարկել տվյալայնացված մարմնի խնդիրը՝ որպես կենսաքաղաքական մարմնի վերափոխված ձև, որը մասնակից է մշտական չափման, պրոֆիլավորման և գնահատման գործընթացներին,
- վերլուծել դիմադրության և ազատության փոխկապակցվածությունն իշխանական հարաբերությունների ծիրում՝ պարզաբանելով դրանց դերը սուբյեկտի ինքնակազմավորման գործընթացում,
- տեսականորեն ձևակերպել «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» մոդելը՝ որպես հետկենսաքաղաքական բարոյականության հնարավոր հարթություն:

Այս խնդիրների համալիր լուծումը հնարավորություն է տալիս սուբյեկտի ձևավորումը դիտարկելու ոչ միայն որպես պատմականորեն պայմանավորված կառուցում, այլև իբրև ժամանակակից կառավարման ռեժիմների դինամիկ վերաձևավորման արդյունք:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտությունը հիմնված է Մ. Ֆուկոյի քննադատական վերլուծության վրա, որի շրջանակում սուբյեկտը դիտարկվում է որպես պատմականորեն պայմանավորված և իշխանական հարաբերությունների ծիրում ձևավորվող կառուցում: Աշխատանքում կիրառվում է դիսկուրսիվ և կառուցվածքային վերլուծություն՝ բացահայտելու համար սուբյեկտի ձևավորման ինստիտուցիոնալ և կարգավորող մեխանիզմները:

Կարգապահական և կենսաքաղաքական իշխանության քննությունը իրականացվում է պատմական համատեքստի հաշվառմամբ՝ ցույց տալու դրանց փոխակերպումները ժամանակակից տեխնոլոգիական պայմաններում: Ժամանակային կարգապահության և կանխատեսական կառավարելիության վերլուծությունը կառուցել ենք ֆուկոյան «իշխանություն — գիտելիք» փոխկապակցման տեսական հենքի ընդլայնման վրա՝ արդիականացնելով այն և տեղափոխելով տվյալահեն և ալգորիթմիկ միջավայրերի քննության դաշտ:

Ալգորիթմիկ կառավարման և տվյալայնացված մարմնի խնդիրը դիտարկել ենք միջառարկայական տեսանկյունից՝ համադրելով փիլիսոփայական և հասարակագիտական վերլուծության տարրեր: Խնդրի բարոյական հարթությունը քննելիս սուբյեկտի ինքնակերտման տեխնոլոգիաները վերաիմաստավորվում են փոխկապակից հարաբերությունների շրջանակում՝ ձևակերպելով պատասխանատվության նոր տեսական հնարավորություններ:

Այսպիսով՝ հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում է սուբյեկտայնության քննադատական վերլուծությունը՝ կառուցված ֆուկոյան տեսական ավանդույթի շարունակության և դրա ժամանակակից վերաիմաստավորման վրա:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակում սուբյեկտի ձևավորման և ժամանակակից կառավարելիության ձևափոխումների հիմնահարցը քննության է առնվել ոչ միայն դասական կարգապահական և կենսաքաղաքական վերլուծության սահմաններում, այլև դրանց ժամանակային, կանխատեսական և տվյալահեն վերաձևավորումների համատեքստում: Արդյունքում ձևակերպվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

- Սուբյեկտի ձևավորման գործընթացներն առաջին անգամ քննվում են ոչ միայն կարգապահական և կենսաքաղաքական ռեժիմների շրջանակում, այլև ժամանակային և կանխատեսական կառավարելիության պայմաններում՝ բացահայտելու իշխանության տարածական վերահսկումից դեպի ապագայի հաշվարկ և ռիսկի կառավարում անցման տրամաբանությունը: Միաժամանակ՝ այս տեսական շրջանակը ներմուծել ենք հայալեզու փիլիսոփայական դիսկուրս՝ սուբյեկտի ժամանակային և կանխատեսական կարգավորման հարցադրումները ձևակերպելով տեղական գիտական լեզվի շրջանակում:
- Ատենախոսության մեջ մշակվել և տեսականորեն հիմնավորվել են «ժամանակային կարգապահություն», «տվյալայնացված մարմին», «ալգորիթմային գործակարգեր», «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտ» հասկացությունները՝ որպես իշխանության ժամանակակից վերլուծության նոր գործիքակազմ:
- Հիմնավորվել է այն դրույթը, որ ժամանակակից կառավարելիության առանցքային մեխանիզմը ներկայության վերահսկումից անցնում է դեպի

հնարավորության վերահսկում, երբ սուբյեկտը կարգավորվում է ապագայի հավանականությունների, ռիսկերի և կանխատեսումների միջոցով:

- Ցույց է տրվել, որ մարմինը ժամանակակից տեխնոլոգիական միջավայրում կարգապահական օբյեկտից վերափոխվում է տվյալահեն կառավարման հանգույցի՝ ներառվելով չափման, դասակարգման, վարկանիշավորման և թվային պրոֆիլավորման համակարգերում:
- Առաջադրվել և հիմնավորվել է այն թեզը, որ ժամանակակից սոցիալական ինստիտուտների գործունեության կառուցվածքային հակասություններից մեկը կարճաժամկետ օպերացիոն արդյունավետության առաջնահերթությունն է՝ սուբյեկտի երկարաժամկետ ինքնակազմավորման և ազատության հնարավորությունների հաշվին:
- Վերլուծվել է սուբյեկտի երկակի դիրքը կանխատեսական կառավարելիության պայմաններում՝ իբրև միաժամանակ կարգավորվող և ինքնակարգավորվող միավոր, որի ինքնությունը ձևավորվում է հաշվարկային և նորմատիվ միջավայրերի փոխազդեցության արդյունքում:
- Հիմնավորվել է «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» տեսական նախագիծը՝ որպես հետկենսաքաղաքական բարոյականության հնարավոր ուղղություն, երբ պատասխանատվությունը պայմանավորված է ոչ թե ինքնաբավ սուվերենությամբ, այլ փոխադարձ կախվածության գիտակցմամբ:
- Ցույց է տրվել, որ ժամանակակից տեխնոլոգիական և սոցիալ-մշակութային տեղաշարժերը պայմանավորում են իշխանության մեխանիզմների որակական վերափոխում, ինչը պահանջում է ֆուկոյան վերլուծության քննադատական ընդլայնում և համապատասխանեցում նոր պայմանների տրամաբանությանը:
- Առաջադրվել և հիմնավորվել է իշխանության ժամանակակից ձևափոխությունների ուսումնասիրության համակցված տեսական-մեթոդաբանական մոտեցում, որն ընդլայնում է հայալեզու փիլիսոփայական դաշտի վերլուծական հնարավորությունները:

Այսպիսով՝ ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է թե՛ թեմայի հայաստանյան գիտական դաշտում համակարգված և ընդլայնված քննությամբ, թե՛ սուբյեկտի կառուցման տրամաբանության ժամանակային և կանխատեսական վերաձևավորման տեսական հիմնավորմամբ՝ տվյալահեն կառավարելիության նոր պայմաններում:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Ուսումնասիրելով սուբյեկտի ձևավորման հիմնահարցը որպես ֆուկոյան քննադատական ավանդույթի շարունակություն ժամանակակից սոցիալ-տեխնոլոգիական պայմանների համատեքստում, վերլուծելով դասական կարգապահական և կենսաքաղաքական իշխանության ձևերը, ինչպես նաև բացահայտելով 21-րդ դարում կառավարելիության

տրամաբանության վերափոխումները՝ ժամանակի, կանխատեսման և տվյալահեն հաշվարկի ուղղությամբ, պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

- Վերլուծելով սուբյեկտի ձևավորման ֆուկոյան ոչ մարդաբանական հիմքերը, ըստ որոնց՝ սուբյեկտը կառուցվում է դիսկուրսիվ և ինստիտուցիոնալ կարգավորման մեխանիզմների միջոցով, մենք առաջադրել և փորձել ենք հիմնավորել, որ ժամանակակից պայմաններում սուբյեկտի կառուցումն ընդլայնվում է կանխատեսական և տվյալահեն կառավարման ռեժիմների ներգործությամբ, երբ կարգավորման առանցքն արդեն ոչ միայն նորմալացման, այլև ապագայի հնարավորությունների հաշվարկի դաշտում է:
- Քննարկելով կարգապահական իշխանության տարածական տրամաբանությունը, որը Ֆուկոյի տեսության մեջ կենտրոնացած էր մարմնի տեղաբաշխման, տեսանելիության և վերահսկողության մեխանիզմների վրա՝ առաջադրել ենք դրույթ, որ ներկայումս այդ տրամաբանությունը վերաձևավորվում է ոչ միայն ժամանակային կարգապահության, այլև տվյալահեն կառավարելիության ձևով: Եթե կարգապահական ռեժիմներում վերահսկողությունը հիմնված էր մարմնի ֆիզիկական կազմակերպման և տեսանելիության վրա, ապա ժամանակակից պայմաններում այն իրականացվում է թվայնացված չափման, պրոֆիլավորման և հաշվարկելիության մեխանիզմներով, երբ կարգավորվում է ոչ միայն մարմնի ներկայությունը, այլև նրա ապագա հնարավոր վարքը:
- Ուսումնասիրելով կենսաքաղաքական իշխանության դասական մոդելը, որտեղ բնակչության կառավարումը հիմնված էր կյանքի կարգավորման և վիճակագրական վերահսկման վրա՝ փորձել ենք հիմնավորել այն դրույթը, որ 21-րդ դարում այդ կարգավորումը համալրվում է ալգորիթմիկ և տվյալահեն մեխանիզմներով՝ ձևավորելով կանխատեսելի կառավարելիության գործակարգ, որի շրջանակում իշխանությունը գործադրում է ոչ միայն կարգավորող, այլև նախօրոք հաշվարկող և պրոֆիլավորվող գործառույթ:
- Վերլուծելով դիմադրության խնդիրն իշխանական հարաբերությունների ծիրում, ըստ որի՝ Ֆուկոյի համակարգում դիմադրությունը իշխանության ներքին պայմանն է՝ առաջադրել ենք այն դրույթը, որ ժամանակակից պայմաններում դիմադրությունը կարող է դրսևորվել նաև որպես կառավարման ռեժիմների վերակազմավորման գործոն՝ վերափոխելով սուբյեկտայնության ձևավորման հաշվարկային և նորմատիվ պայմանները:
- Քննարկելով ալգորիթմիկ կառավարման ազդեցությունը սուբյեկտայնության վրա՝ հիմնավորվել ենք այն դրույթը, որ ժամանակակից կառավարելիության առանցքային մեխանիզմը արդեն իրականացված վարքի վերահսկումից անցնում է դեպի ապագա վարքի կանխատեսում և հավանականությունների կառավարում, երբ

սուբյեկտը կարգավորվում է ոչ թե իր արդեն իրականացրած վարքով, այլ իր կանխատեսելիությամբ, ռիսկայնությամբ և տվյալային պրոֆիլով:

- Վերլուծելով սուբյեկտի ինքնաձևավորման տեխնոլոգիաների վերաձևավորումը ժամանակային կարգապահության և կանխատեսական կառավարման պայմաններում, ինչպես նաև քննելով դրանց բարոյական հետևանքները՝ փորձել ենք հիմնավորել այն դրույթը, որ հետկենսաքաղաքական հասարակության մեջ սուբյեկտի ձևավորումն այլևս չի ընթանում ենթարկման և ինքնավարության բևեռների միջև, այլ փոխադարձ ազդեցությունների և երկարաժամկետ պարտավորությունների դաշտում է, ինչի հիման վրա առաջադրվել և սահմանվել է «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» տեսական մոդելը՝ որպես հետկենսաքաղաքական բարոյականության հնարավոր հորիզոն:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում ներկայացված հիմնահարցերի վերլուծությունը, կատարված ընդհանրացումներն ու եզրահանգումներն ունեն թե՛ տեսական, թե՛ գործնական կարևոր նշանակություն և կարող է.

- նպաստել սուբյեկտի ձևավորման խնդրի արդի վերաիմաստավորմանը՝ այն դիտարկելու ոչ միայն կարգապահական և կենսաքաղաքական իշխանության դասական տրամաբանության շրջանակում, այլև ժամանակային, կանխատեսական և տվյալահեն կառավարելիության պայմաններում,
- ընդլայնել ֆուկոյան քննադատական լեզուն, ծառայել սուբյեկտայնության ժամանակակից ձևափոխությունների հետագա տեսական ուսումնասիրություններին և հնարավորություն տալ վերլուծելու դրանք նոր տեսական հարթության վրա՝ գործածելով աշխատանքում առաջադրված մի շարք նոր հասկացությունները՝ «ժամանակային կարգապահություն», «տվյալայնացված մարմին», «ալգորիթմիկ սուբյեկտ», «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտ»,
- համալրել և հարստացնել հայալեզու գիտափիլիսոփայական մտքի շտեմարանը սուբյեկտայնության ձևավորման հիմնահարցի վերաբերյալ՝ հիմք ստեղծելով հետագա տեսական և մեթոդաբանական հետազոտությունների համար,
- կիրառվել արդի սոցիալական ինստիտուտների քննադատական վերլուծություններում, մասնավորապես կրթության, առողջապահության, իրավական և վարչարարական համակարգերի ուսումնասիրության մեջ, որտեղ լայնորեն կիրառվում են գնահատման, վարկանիշավորման, թվայնացման և տվյալահեն կարգավորման մեխանիզմները և տեսականորեն բացահայտել, թե ինչպես են այդ գործընթացներն ազդում սուբյեկտի ձևավորման վրա և ինչ հետևանքներ կարող են ունենալ ինքնության, մարմնավորության և պատասխանատվության սահմանների համար,

• ծառայել որպես ուսումնաօժանդակ նյութ բուհերում դասավանդվող «Փիլիսոփայություն», «Քաղաքական փիլիսոփայություն», «Բարոյագիտություն», «Բիոէթիկա», «Մարդաբանություն», «Իմացաբանություն» և հարակից դասընթացների համար՝ սուբյեկտայնության և իշխանության ժամանակակից ձևափոխությունների քննարկման նպատակով,

• օգտագործվել գիտական, հասարակական, քաղաքական, կրթական և տեխնոլոգիական գործընթացների հայեցակարգային ուսումնասիրման և դրանց վերաբերյալ քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման համար:

Այսպիսով՝ աշխատանքը ոչ միայն տեսականորեն ընդլայնում է սուբյեկտի ձևավորման քննադատական վերլուծության դաշտը, այլև առաջարկում է կիրառելի վերլուծական հենք ժամանակակից ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական միջավայրերում սուբյեկտայնության վերաիմաստավորման համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական գաղափարներն ու առանձին դրույթները ներկայացվել և քննարկվել են Երևանի պետական բժշկական համալսարանում 2011 թվականից ի վեր տարբեր դասընթացների, ինչպես նաև Հասարակագիտական առարկաների ամբիոնի տեսական և գործնական սեմինարների շրջանակում (2021 թ.– առ այսօր)՝ ապագա և գործող բժիշկների հետ մասնագիտական, էթիկական և սոցիալ-փիլիսոփայական հարցերի համատեքստում: Դրանք ներկայացվել են նաև ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներին ՈՒԳԸ-ի հետ համատեղ կազմակերպված հատուկ սեմինարներում (2012–2015 թթ.), ինչպես նաև ԵՊԲՀ ՔՈԲՐԵՅՆ ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնում ուսանողների և աշխատակիցների համար կազմակերպված հատուկ սեմինարների ընթացքում (2018–2025 թթ.):

Հետազոտության արդյունքները ներկայացվել են տեղական և միջազգային մի շարք գիտաժողովներում, մասնավորապես՝ Երևանի պետական համալսարանում կայացած «Փիլիսոփայությունը և արդի մարտահրավերները. Մարդը գոյաբանական ծուղակում» միջազգային գիտաժողովում, որտեղ հեղինակը հանդես է եկել «Գոյաբանական ծուղակում կողմնորոշվելը. Ֆուկոյի ինքնության տեխնոլոգիաներն արհեստական բանականության դարաշրջանում» թեմայով (նոյեմբեր, 2025 թ.), Երևանի պետական համալսարանի և Փիլիսոփայության ու պատմության տեսության լաբորատորիայի կազմակերպած «Պետության կողմից հովանավորվող պատմություններ և պատմագրական հեղինակություն» միջազգային գիտաժողովում՝ «Հիշողության կարգապահությունը. պետական պատմագրության և լուսանցքային հիշողությունների բախումը Ֆուկոյի տեսանկյունից» զեկուցմամբ (հունիս, 2025 թ.),

Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացած «Ազգային ինքնությունը ճգնաժամի ժամանակներում» միջազգային գիտաժողովում՝ «Ազգային ինքնությունը որպես կարգապահական մեխանիզմ» զեկուցմամբ (հունիս, 2025 թ.), Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում կայացած Բիոէթիկայի, բժշկական էթիկայի և առողջապահական իրավունքի 17-րդ համաշխարհային գիտաժողովում՝ «Մարմնի կառավարումը կոդի միջոցով. արհեստական բանականությունը, բիոէթիկան և Մ. Ֆուկոյի կենսաքաղաքականությունը ժամանակակից առողջապահության մեջ» զեկուցմամբ (նոյեմբեր, 2025 թ.), ինչպես նաև Իտալիայի Պիզա քաղաքում կայացած «Ֆուկոյի տրանսպատմական և տրանսդիսցիպլինար ժառանգության վերաիմաստավորում» միջազգային գիտաժողովում՝ «Թվային ասկետիզմ. ինքնաօպտիմալացումը որպես նեոլիբերալ կառավարելիություն» զեկուցմամբ (հունվար, 2026 թ.):

Բացի այդ, հեղինակը հաջողությամբ մասնակցել է Կոպենհագենի բիզնես դպրոցի դոկտորական մասնագիտական վերապատրաստման միջազգային դասընթացին՝ «Ֆուկո և կազմակերպություն, տեխնոլոգիա ու սուբյեկտի ձևավորում» թեմայով՝ ներկայացնելով «Սուբյեկտի ձևավորումն իշխանություն/գիտելիք փոխազդեցության միջոցով» հետազոտական աշխատանքը և ստացել PhD համապատասխան վկայական (2025 թ., Դանիա, Կոպենհագեն):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի գիտական հոդվածներում:

Ատենախոսության պլանը քննարկվել է ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնում 2012 թ. հունվարին, ամբողջական շարադրանքը՝ 2025 թ. դեկտեմբերին, իսկ արդեն 2026 թ. մարտի 27-ին՝ վերջնական քննարկումից հետո, երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ 5-ական ենթագլուխներով, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 145 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները, առաջադրվել են գիտական նորույթ պարունակող դրույթները, հիմնավորվել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ **«Սուբյեկտն իշխանական-դիսկուրսիվ հարաբերությունների համատեքստում»** վերտառությամբ, նվիրված է սուբյեկտի խնդրի

«ապաբնականացմանը», այն դուրս բերելով մարդու էության, ներքին ինքնության լեզվից և «տեղակայելով» փոխառնչությունների կառուցվածքի մեջ: Ֆուկոյի իշխանություն/գիտելիք հարաբերության հայեցակարգի շրջանակում սուբյեկտը դիտարկվում է ոչ թե որպես իշխանությունից անկախ գոյություն ունեցող միավոր, այլ, ընդհակառակը, դրա ծիրում ձևավորվող դիրք: Հետևաբար սուբյեկտի հարցը չի կարող լուծվել առանց իշխանության հարցի:

Առաջին՝ **««Սուբյեկտ» հասկացության տեսական վերաիմաստավորումը. ոչ մարդաբանական դիրքից դեպի կառավարման դիրք»** ենթագլխում հանգամանալից վերլուծվում են սուբյեկտի խնդրի ձևավորման և զարգացման փիլիսոփայական ավանդույթները: Այստեղ վերլուծվում են սուբյեկտի դասական ընկալումները՝ որպես ինքնաբավ կենտրոն, և ցույց է տրվում դրանց սահմանափակությունը:

Ուսումնասիրելով սուբյեկտի խնդրի տեսական վերաիմաստավորումը՝ ենթագլխում հիմնավորվում է, որ դասական փիլիսոփայական ավանդույթում սուբյեկտը դիտարկվել է իբրև ճանաչողության, գործողության և ինքնության ինքնաբավ և նախնական կենտրոն: Ցույց է տրվում, որ այս մոտեցման շրջանակում սուբյեկտն ընկալվել է որպես աշխարհից և հարաբերություններից անկախ գոյություն ունեցող միավոր, որի միջոցով հնարավոր է բացատրել գիտելիքի և փորձառության կազմակերպումը:

Ենթագլխում ցույց է տրվում, որ նման մարդաբանական մեկնաբանությունը սահմանափակում է սուբյեկտի վերլուծության հնարավորությունները՝ այն ներկայացնելով իբրև ինքնին տրված և անքննելի հիմք: Այս համատեքստում, հիմնվելով Ֆուկոյի ժառանգության վրա, հիմնավորվում է, որ սուբյեկտի նույնացումը մարդու հետ հանգեցնում է փակ իմացաբանական շրջանի, որտեղ մարդը ծառայում է սուբյեկտի հիմնավորման համար, իսկ սուբյեկտը՝ մարդու ճանաչողական գերազանցության ապացույցի:

Վերլուծելով եվրոպական իմացաբանական ավանդույթը՝ ենթագլխում հիմնավորվում է, որ «սուբյեկտ» հասկացությունը սկզբնապես ոչ թե իբրև մարդաբանական նկարագրություն է, այլ՝ ճանաչողության կազմակերպման ձևական պայման: Սուբյեկտը ներկայացվում է իբրև այն կառուցվածքային դիրքը, որի շնորհիվ հնարավոր է ճանաչողական տարրերի միավորումը, տարբերակումը և գնահատումը:

Անցում կատարելով նոր շրջանի փիլիսոփայությանը՝ ենթագլխում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Ռենե Դեկարտի մեթոդաբանական կասկածին: Հիմնավորվում է այն թեզը, որ Դեկարտի կասկածն առաջին անգամ մեթոդապես խզում է սուբյեկտի և մարդու նույնացումը՝ բացահայտելով սուբյեկտը որպես մտածելու նվազագույն և անհերքելի դիրք: Միաժամանակ ցույց է տրվում, որ Դեկարտի մոտ այս դիրքը մնում է տեսականորեն չսահմանված և չի վերածվում ճանաչողության համակարգային պայմանի:

Ենթագլխում քննարկվում է նաև Կանտի տրանսցենդենտալ (անդրանցական) փիլիսոփայությունը, որտեղ սուբյեկտը սահմանվում է իբրև փորձառության հնարավորության անհրաժեշտ պայման: Հիմնավորվում է, որ թեև Կանտը տարանջատում է էմպիրիկ մարդուն և տրանսցենդենտալ սուբյեկտը, այնուամենայնիվ, սուբյեկտը շարունակում է գործել որպես համընդհանուր և անհրաժեշտ կառուցվածք՝ պահպանելով մարդաբանական սահմանափակումները:

Հիմնվելով Ֆուկոյի «Գիտելիքի հնէաբանություն» և «Հսկել և պատժել» աշխատությունների վրա՝ ցույց է տրվում, որ սուբյեկտը պետք է դիտարկել ոչ թե որպես ճանաչողության նախնական հենակետ, այլ որպես դիսկուրսիվ հարաբերությունների մեջ ձևավորվող դիրք, որի միջոցով խոսքը կարող է դառնալ դատողություն, իսկ դատողությունը՝ գիտելիք:

Ենթագլխում առանձնահատուկ տեղ է հատկացվում «մարդու մահվան» գաղափարի մեկնաբանությանը, որը ներկայացվում է ոչ թե որպես գոյաբանական պնդում, այլ իբրև իմացաբանական ճեղք՝ սուբյեկտի և մարդու նույնացման հաղթահարման տեսանկյունից: Ցույց է տրվում, որ այս ճեղքի արդյունքում սուբյեկտը կորցնում է իր ինքնաբավ հիմքը և դառնում է պատմականորեն և դիսկուրսի առումով պայմանավորված կառուցվածք:

Ամփոփելով ենթագլուխը՝ եզրակացվում է, որ սուբյեկտի տեսական վերաիմաստավորումը հանգեցնում է նրա ապամարդաբանականացմանը և պատմականացմանը:

Երկրորդ՝ **«Իշխանությունը՝ որպես հարաբերությունների ցանց»** ենթագլխում քննության է առնվում իշխանության վերաիմաստավորումը՝ ֆուկոյան մոտեցման շրջանակում: Ի տարբերություն դասական քաղաքական-իրավական ըմբռնման, որտեղ իշխանությունը դիտարկվում է որպես պատկանելություն և ուղղահայաց հարկադրանք, Ֆուկոյի մոտ այն սահմանվում է որպես հարաբերությունների ցանց, որի մեջ սուբյեկտայնությունն ինքնին հնարավոր է դառնում:

Ցույց է տրվում, որ իշխանությունը ոչ միայն սահմանափակում, այլև կերտում է՝ ձևավորելով վարքի հնարավորության դաշտեր, նորմատիվ չափանիշներ և ինքնընկալման ձևեր: Այն գործում է որպես վարքի ուղղորդման պրակտիկա՝ դարձնելով գործողությունները կանխատեսելի և կարգավորվող:

Ըստ Ֆուկոյի՝ իշխանությունն ապակենտրոն է և բազմակենտրոն. այն չի պատկանում որևէ սուբյեկտի, այլ շրջանառվում է հարաբերությունների մեջ՝ ներթափանցելով սոցիալական կյանքի տարբեր ոլորտներ: Այս համատեքստում տարբերակվում են իշխանությունն ու տիրապետումը՝ ընդգծելով, որ առաջինը ենթադրում է դինամիկ փոխազդեցություն, իսկ երկրորդը՝ դրա կարծրացած ձևն է:

Վերլուծվում է նաև կառավարումը որպես վարքի ուղղորդման ռացիոնալություն, որը գործում է ոչ թե ուղղակի հարկադրանքով, այլ այն պայմանների կազմակերպմամբ, որոնցում սուբյեկտը գործում է որպես ընտրող և արձագանքող միավոր:

Այսպիսով՝ սուբյեկտը դիտարկվում է ոչ թե որպես իշխանության արտաքին օբյեկտ, այլ որպես այն հանգույցը, որտեղ իշխանական հարաբերությունները նյութականանում են վարքագծի և ինքնընկալման ձևերում:

Ամփոփելով՝ իշխանությունը հանդես է գալիս որպես հարաբերությունների ցանց, սուբյեկտը՝ այդ ցանցում ձևավորվող դիրք, իսկ կառավարումը՝ գործողությունների դաշտի կազմակերպման տրամաբանություն, ինչը թույլ է տալիս սուբյեկտը հասկանալ որպես հարաբերությունների մեջ ձևավորվող կառուցվածք:

Երրորդ՝ **«Կարգապահական իշխանություն. մարմինը՝ որպես կառավարման օբյեկտ»** ենթագլխում քննության է առնվում իշխանության նյութականացման և սուբյեկտի ձևավորման կոնկրետ մեխանիզմները՝ հիմնավորելով, որ կարգապահական իշխանությունը սուբյեկտայնության կերտման հիմնարար գործակարգ է:

Ցույց է տրվում, որ իշխանության հարաբերութեենական ըմբռնումը պահանջում է անցում դեպի այն մեխանիզմների վերլուծությունը, որոնց միջոցով այդ հարաբերությունները ստանում են նյութական ձև: Ֆուկոյի «Հսկել և պատժել» աշխատության հիման վրա կարգապահական իշխանությունը ներկայացվում է իբրև մոդել, որտեղ կառավարումն իրականացվում է ոչ թե բաց հարկադրանքով, այլ վերահսկման, նորմալացման և վարքագծի ուղղորդման տեխնիկաներով:

Հիմնավորվում է, որ դրա կենտրոնում գտնվում է մարմինը՝ որպես կազմակերպվող և կարգավորվող հարթություն: Ի տարբերություն սուվերեն իշխանության, որը գործում է օրենքի և պատժի տրամաբանությամբ, կարգապահական իշխանությունը հիմնված է նորմի վրա՝ ուղղված ոչ թե խախտման արձագանքին, այլ շեղման կանխմանը և վարքագծի շարունակական կարգավորմանը:

Վերլուծվում են դրա հիմնական մեխանիզմները՝ տարածական կազմակերպումը, ժամանակային կարգավորումը և նորմալացումը, որոնց միջոցով մարմինները դառնում են տեսանելի, համեմատելի և հաշվարկելի: Այս համատեքստում Բենթամի պանօպտիկոնը, ինչպես վերլուծում է Ֆուկոն, հանդես է գալիս ոչ միայն որպես ճարտարապետական լուծում, այլ որպես իշխանության գործարկման սկզբունք, որտեղ մշտական տեսանելիությունը հանգեցնում է վերահսկողության ներանձնացմանը:

Ցույց է տրվում, որ կարգապահական իշխանությունը գործում է վարքագծի ինքնակարգավորման միջոցով՝ ձևավորելով նորմատիվ համապատասխանության մեխանիզմներ, որտեղ սուբյեկտը կարգավորվում է տեսանելիության և գնահատման դաշտում:

Միաժամանակ ընդգծվում է, որ այս տրամաբանությունը չի սահմանափակվում ինստիտուցիոնալ միջավայրերով, այլ տարածվում է սոցիալական փոխազդեցության մեջ. Գոֆմանի մոտեցումը ցույց է տալիս, որ նույն մեխանիզմները գործում են դերերի և ինքնադիտարկման միջոցով:

Այսպիսով՝ սուբյեկտը չի նախորդում իշխանությանը, այլ ձևավորվում է դրա շրջանակում՝ միաժամանակ լինելով և՛ դրա օբյեկտ, և՛ գործարկման միջավայր:

Ամփոփելով՝ կարգապահական իշխանությունը ձևավորում է սուբյեկտայնության այնպիսի գործակարգ, որտեղ կառավարելիությունը ձեռք է բերվում վարքագծի կազմակերպման և ինքնակարգավորման միջոցով, ինչը թույլ է տալիս սուբյեկտը հասկանալ որպես հարաբերությունների մեջ ձևավորվող կառուցվածք:

Չորրորդ՝ **«Կենսաքաղաքական իշխանություն. բնակչությունը՝ որպես կառավարման դաշտ»** ենթագլխում քննության է առնվում իշխանության ռացիոնալության փոփոխությունը՝ անհատական մարմնի կարգապահական կառավարումից դեպի կյանքի և բնակչության մակարդակով կարգավորում՝ հիմնավորելով, որ այստեղ իշխանության օբյեկտը դառնում է կյանքի ընդհանուր ընթացքը:

Ցույց է տրվում, որ կարգապահական մեխանիզմները սահմանափակ են այն դեպքում, երբ կառավարումը չի կարող սահմանափակվել անհատական վարքագծի վերահսկմամբ: Ֆուկոյի դասախոսությունների («Հասարակություն պետք է պաշտպանվի», «Կենսաքաղաքականության ծնունդը») շրջանակում ձևավորվում է կենսաքաղաքական ռացիոնալություն, որն ուղղված է ոչ թե առանձին մարմինների, այլ կենսաբանական և սոցիալական գործընթացների կարգավորմանը:

Այս փոփոխությամբ կառավարման թիրախը դառնում է բնակչությունը՝ որպես վիճակագրական գործընթացների ամբողջություն: Ի տարբերություն կարգապահական իշխանության, որը գործում է նորմի համապատասխանության հիման վրա, կենսաքաղաքական իշխանությունը գործում է հավանականությունների, ռիսկերի և միջին ցուցիչների կառավարման միջոցով:

Վերլուծվում է, որ դրա հիմնական գործիքներն են հաշվարկը, կանխատեսումը և կանխարգելումը. իշխանությունը միջամտում է ոչ թե արդեն տեղի ունեցած գործողություններին, այլ դրանց առաջացման պայմաններին: Այս համատեքստում «նորմը» ստանում է վիճակագրական նշանակություն:

Կարևոր է ընդգծել, որ փոխվում է նաև ազատության և կառավարման հարաբերությունը. իշխանությունն այլևս չի հակադրվում ազատությանը, այլ գործում է դրա միջոցով՝ ներառելով սուբյեկտին որպես ընտրող և հաշվարկող միավոր: Կառավարումն իրականացվում է վարքագծի ուղղորդմամբ՝ ձևավորելով այն պայմանները, որոնցում ընտրությունները դառնում են «խելամիտ»:

Այսպիսով՝ կառավարելիությունը վերաբերում է ոչ թե հնազանդությանը, այլ այն հարաբերությունների դաշտին, որտեղ վարքը դառնում է կանխատեսելի և ուղղորդելի, իսկ սուբյեկտը հանդես է գալիս որպես դրա ակտիվ տարր:

Ամփոփելով՝ կենսաքաղաքական իշխանությունը ձևավորում է կառավարման այնպիսի գործակարգ, որտեղ իշխանությունը գործում է կյանքի պայմանների կարգավորման և ինքնակարգավորման միջոցով՝ թույլ տալով սուբյեկտայնությունը հասկանալ որպես պատմականորեն փոփոխվող գործընթաց:

Հինգերորդ՝ **«Ժամանակային կարգապահություն. իշխանության նոր տրամաբանությունը»** ենթագլխում քննության է առնվում իշխանության ժամանակային վերակազմավորումը՝ հիմնավորելով, որ արդի փուլում կարգապահական և կենսաքաղաքական մեխանիզմները վերափոխվում են դեպի ապագայի կառավարման տրամաբանություն, որտեղ իշխանության հիմնական օբյեկտը դառնում է հնարավոր վարքագիծը: Ի տարբերություն Ֆուկոյի, որի վերլուծությունները կենտրոնանում են տարածական վերահսկման և ներկա վարքագծի կարգավորման վրա, սույն աշխատանքում առաջարկվում է «ժամանակային կարգապահության» հայեցակարգը՝ ցույց տալու, որ ժամանակակից պայմաններում կառավարումը վերակազմավորվում է որպես ապագայի հնարավորությունների հաշվարկ և ռիսկերի կառավարում:

Ցույց է տրվում, որ դասական կարգապահական գործակարգը, որն ուղղված էր ներկա վարքագծի կարգավորմանը, փոխարինվում է ապագայի հնարավոր սցենարների կառավարմամբ, իսկ ժամանակը վերաիմաստավորվում է՝ դադարելով լինել չեզոք հաջորդականություն և վերածվելով իշխանության կողմից կազմակերպվող պաշարի:

Այս փոփոխությամբ վերահսկողությունը տեղափոխվում է տարածական սահմանափակումներից դեպի շարունակական գնահատման և կանխատեսման դաշտ. այն այլևս կախված չէ ֆիզիկական ներկայությունից, այլ գործում է ցուցանիշների, պրոֆիլների և ռիսկային հաշվարկների միջոցով՝ տեղադրելով սուբյեկտին հավանականությունների ցանցում:

Վերլուծվում է, որ ժամանակային կարգապահության կենտրոնում գտնվում է ռիսկի կառավարման տրամաբանությունը, որտեղ իշխանությունը միջամտում է ոչ թե արդեն տեղի ունեցած գործողություններին, այլ դրանց առաջացման հավանականությանը. այս պայմաններում վերահսկողությունը փոխարինվում է կանխատեսմամբ, իսկ նորմալացումը՝ հավանականությունների կառավարմամբ:

Կարևոր է ընդգծել, որ փոխվում է նաև գիտելիքի և ճշմարտության գործառույթը. իշխանությունը չի ձգտում բացահայտելու սուբյեկտի «իրական» բնույթը, այլ ձևավորում է կիրառելի գնահատականներ՝ պրոֆիլներ և կանխատեսումներ, որոնք բավարար են վարքագծի դաշտը կազմակերպելու համար:

Այս համատեքստում ձևավորվում է սուբյեկտայնության նոր ձև, որտեղ սուբյեկտը դառնում է տվյալային, ապագակենտրոն և ինքնակարգավորվող միավոր, որի վարքագիծը կարգավորվում է ապագա հետևանքների հաշվարկով և ռիսկերի նվազեցմամբ:

Ամփոփելով՝ ժամանակային կարգապահությունը մարմնավորում է իշխանության այնպիսի գործակարգ, որտեղ կառավարումն իրականացվում է ապագայի մոդելավորման և կանխատեսման միջոցով՝ ձևավորելով սուբյեկտ, որը գործում է մշտապես գնահատվող ապագայի պայմաններում:

Երկրորդ՝ **«Սուբյեկտի գործունեությունը. դիմադրություն և ինքնկերտում»** վերտառությամբ գլուխը նվիրված է սուբյեկտի գործունեության, դիմադրության և ինքնաձևավորման հնարավորության քննությանն իշխանական հարաբերությունների համատեքստում: Գլխում նպատակ է դրվում վերահմաստավորելու սուբյեկտի ակտիվությունը ոչ թե իբրև իշխանությունից դուրս գտնվող ինքնավարության արտահայտություն, այլ իբրև գործելու եղանակ իշխանական ռացիոնալությունների ներսում: Սույն գլխում հիմնավորվում է այն դրույթը, որ սուբյեկտը, թեև ձևավորվում է կարգապահական, կենսաքաղաքական և ժամանակային իշխանության մեխանիզմների միջոցով, ամբողջությամբ չի սպառվում դրանցով: Նրա գործունեությունը հնարավոր է դառնում հենց այդ հարաբերությունների դաշտում՝ իբրև նորմատիվ կարգավորման, հաշվարկի և կանխատեսման գործելակարգերի ներսում գործող դինամիկա: Վերլուծվում է, որ սուբյեկտի գործունեությունը չի կարող ըմբռնվել իբրև ազատագրում կամ իշխանության հաղթահարում: Այն դրսևորվում է իբրև տեղային, փոփոխական և հարաբերական գործընթաց, որն արտահայտվում է վարքագծի շեղումների, նորմերի վերահմաստավորման և ինքնակարգավորման այլ ձևերի միջոցով: Այս համատեքստում դիմադրությունը դիտարկվում է ոչ թե իբրև իշխանության արտաքին հակադրություն, այլ իբրև դրա ներսում ծնվող և դրա հետ փոխկապակցված գործընթաց: Հիմնավորվում է նաև, որ ինքնակերտումը չի հակադրվում ենթարկմանը: Սուբյեկտը միաժամանակ ձևավորվում է նորմատիվ կարգավորման միջոցով և ներգրավվում է ինքնակազմավորման պրակտիկաներում: Այսպիսով՝ ինքնաձևավորումը չի ենթադրում իշխանությունից անկախություն, այլ արտահայտում է սուբյեկտի հարաբերությունն ինքն իր հետ, որը ձևավորված է նույն այն դաշտում, որտեղ գործում են իշխանական մեխանիզմները:

Գլխում ցույց է տրվում, որ սուբյեկտի գործունեությունը հնարավոր է միայն նրա հարաբերական և պատմական բնույթի ընդունման պայմաններում: Սուբյեկտը չի գտնվում իշխանությունից դուրս, սակայն նրա գործունեությունը դրսևորվում է այն կետերում, որտեղ հնարավոր է նորմատիվ գործակարգերի վերաձևում, վարքագծի ռիթմերի փոփոխություն և ինքնակարգավորման այլ եղանակների ձևավորում:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Դիմադրությունը որպես իշխանության ներքին գործառույթ»** ենթագլխում քննության է առնվում սուբյեկտի գործունեության հնարավորությունն իշխանական հարաբերությունների ներսում՝ հիմնավորելով, որ դիմադրությունն իշխանությանն արտաքին հակադրություն չէ, այլ դրան ներհատուկ կառուցվածքային դինամիկա:

Ցույց է տրվում, որ եթե իշխանությունը դիտարկվում է իբրև հարաբերությունների դաշտ, ապա, ինչպես ձևակերպում է Ֆուկոն՝ «որտեղ կա իշխանություն, այնտեղ կա դիմադրություն», հետևաբար այն չի կարող ընկալվել որպես ինքնավար կամ արտաքին երևույթ, այլ գոյություն ունի նույն հարաբերությունների մեջ՝ պայմանավորված դրանց բացությամբ և դինամիկությամբ:

Հիմնավորվում է, որ դիմադրությունը չի նույնացվում նորմերի լիակատար մերժման կամ իշխանական դաշտից դուրս գալու հետ. սուբյեկտը չի կարող գործել իշխանությունից դուրս, սակայն կարող է գործել դրա ներսում՝ վերադասավորելով և շեղելով իր վարքագիծը: Այս իմաստով դիմադրությունն ակտիվ գործընթաց է, որը փոխում է հարաբերությունների գործարկման եղանակը:

Վերլուծվում է, որ այն ծագում է նորմատիվ պահանջի և դրա իրագործման միջև առաջացող անհամապատասխանությունից. քանի որ նորմը միշտ իրագործվում է կատարումների միջոցով, իսկ կատարումները երբեք լիովին չեն համընկնում պահանջին, դիմադրությունը դառնում է այդ անկատարության կառուցվածքային հետևանք:

Այս համատեքստում տարբերակվում են դրա երկու մակարդակները՝ բացահայտ դիմադրությունը և գործառնական անհամապատասխանությունը, որտեղ այն դրսևորվում է որպես առօրյա վարքագծի միկրոտեխնիկա՝ շեղումների, ուշացումների և կանխատեսելիության խաթարման միջոցով:

Զարգացնելով Ֆուկոյան վերոնշյալ մոտեցումը՝ ցույց է տրվում, որ ժամանակակից վերահսկման պայմաններում դիմադրությունը տեղափոխվում է նաև չափման և կանխատեսման դաշտ՝ դրսևորվելով տվյալների և հաշվարկների տրամաբանության խաթարմամբ: Այսպիսով՝ այն ոչ միայն հակազդում է, այլև դառնում է հարաբերությունների վերակազմավորման գործոն:

Ամփոփելով՝ դիմադրությունը իշխանական հարաբերությունների ներհատուկ և անխուսափելի տարր է, որը չի վերացնում այդ հարաբերությունները, այլ ապահովում է դրանց մշտական անկայունությունն ու վերաձևակերպումը:

Երկրորդ գլխի երկրորդ՝ **«Իշխանություն և ազատություն. փոխկապակից հարաբերություններ»** ենթագլխում քննության է առնվում իշխանության և ազատության դասական հակադրության վերաիմաստավորումը, հիմնավորելով, որ դրանք ոչ թե միմյանց բացառող, այլ փոխկապակցված հարաբերության տարրեր են:

Հիմնվելով Ֆուկոյի մոտեցման վրա՝ ցույց է տրվում, որ իշխանությունը չի հակադրվում ազատությանը, այլ հնարավոր է միայն այն պայմաններում, որտեղ սուբյեկտը պահպանում է գործելու որոշակի դաշտ: Այս իմաստով ազատությունը իշխանության գործառնական պայմանն է:

Տարբերակվում են իշխանությունը, հարկադրանքը և տիրապետումը՝ ցույց տալով, որ իշխանությունը գործում է հնարավորությունների դաշտում՝ ուղղորդելով վարքը, մինչդեռ տիրապետումը ներկայացնում է այդ հարաբերությունների կարծրացած ձևը, որտեղ սուբյեկտը զրկվում է մանևրելու հնարավորությունից:

Զարգացնելով այս ֆուկոյան ըմբռնումը՝ ցույց է տրվում, որ ժամանակակից կառավարելիության պայմաններում ազատությունը վերափոխվում է գործառնական փոփոխականի՝ դառնալով այն դաշտը, որի միջոցով իշխանությունը գործում է. սուբյեկտի վարքը մոդելավորվում է իբրև հավանականությունների համակարգ, իսկ ազատությունը՝ իբրև շեղման և կանխատեսելիության հարաբերակցություն:

Ամփոփելով՝ իշխանության և ազատության հարաբերությունը դինամիկ լարվածություն է, որտեղ ազատությունը իշխանության գործարկման ներքին պայման է և դրա սահմանների վերաձևակերպման հնարավորություն:

Երրորդ՝ **«Սուբյեկտի ինքնակերտման տեխնոլոգիաները»** ենթագլխում քննության է առնվում սուբյեկտի ներգրավվածությունը սեփական անձի ձևավորման գործընթացներում, հիմնավորելով, որ ինքնաձևավորումը իշխանությունից դուրս ինքնավար գործընթաց չէ, այլ ընթանում է նույն իշխանական հարաբերությունների դաշտում:

Հիմնվելով Ֆուկոյի «Ես-ի կերտման տեխնոլոգիաները» հայեցակարգի վրա՝ ցույց է տրվում, որ ինքնակերտման տեխնոլոգիաները չեն բացահայտում «ներքին էություն», այլ ներկայացնում են պրակտիկաների շարք, որոնք կազմակերպում են սուբյեկտի հարաբերությունը ճշմարտության, նորմատիվության և ժամանակի հետ: Այս իմաստով ինքնակարգավորումը կառավարման ներքին մեխանիզմ է:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ սուբյեկտը ձևավորվում է օբյեկտիվացման (առարկայացման) և սուբյեկտայնացման փոխկապակցված գործընթացներում՝ միաժամանակ լինելով կարգավորման արդյունք և ինքնակազմավորման կրող: Այս երկակիությամբ սուբյեկտը ներկայանում է իբրև և՛ ենթարկվող, և՛ ինքնակառավարվող միավոր:

Ֆուկոյի մոտ ինքնախնամքի պատմական պրակտիկաները (անտիկ փիլիսոփայություն, ստոիկներ) վերաիմաստավորվում են որպես վարքագծի կազմակերպման տեխնիկաներ, ինչը թույլ է տալիս ինքնաձևավորումը հասկանալ ոչ թե որպես ինքնության բացահայտում, այլ որպես վարժանքների և կրկնությունների միջոցով կառուցվող գործընթաց:

Զարգացնելով այս մոտեցումը՝ ցույց է տրվում, որ արդի պայմաններում ինքնակերտման տեխնոլոգիաները ինտեգրվում են կառավարելիության մեխանիզմներում՝ ներգրավելով սուբյեկտին պատասխանատվության և ինքնակարգավորման պրակտիկաների մեջ: Այս համատեքստում ձևավորվում է «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» գաղափարը, որի ազատությունը արտահայտվում է ոչ թե իշխանությունից դուրս անկախությամբ, այլ դրա շրջանակում մանևրելու հնարավորությամբ:

Վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ տվյալահեն վերահսկման պայմաններում այս տեխնոլոգիաները միաժամանակ ընդլայնում և սահմանափակում են սուբյեկտի գործունեության դաշտը՝ ստեղծելով ընտրության բազմազանություն, բայց նաև ամրապնդելով կանխատեսելիության և չափելիության պահանջները:

Ամփոփելով՝ ինքնակերտման տեխնոլոգիաներն այն դաշտն են, որտեղ ազատությունը դադարում է իշխանությանը հակադիր իդեալ լինելուց և վերածվում է գործառնական կարողության՝ սեփական վարքի և ժամանակի կազմակերպման միջոցով:

Երկրորդ գլխի չորրորդ՝ **«Ալգորիթմիկ սուբյեկտ. կառավարելիության կանխատեսական գործակարգերը և սուբյեկտայնության վերակազմավորումը»** ենթագլխում քննության է առնվում սուբյեկտայնության ձևավորման նոր գործակարգը տվյալահեն և ալգորիթմիկ կառավարելիության պայմաններում, հիմնավորելով, որ այստեղ տեղի է ունենում կառուցվածքային տեղաշարժ՝ նորմատիվ կարգավորումից դեպի կանխատեսելիության վրա հիմնված կառավարում:

Զարգացնելով Ֆուկոյի «կառավարելիություն» հայեցակարգը՝ ցույց է տրվում, որ ալգորիթմիկ կառավարելիությունը չի սահմանափակվում տեխնոլոգիական փոփոխությամբ, այլ վերակազմավորում է իշխանության գործարկման տրամաբանությունը. կառավարումը տեղափոխվում է ապագայի հնարավոր սցենարների հաշվարկի և մոդելավորման դաշտ: Այս պայմաններում սուբյեկտը ոչ միայն իբրև գործողության կրող է, այլև հավանական վարքի կրող, որի ապագան մշտապես ընթերցվում և դասակարգվում է տվյալների միջոցով:

Հիմնավորվում է, որ իշխանությունը գործում է ոչ թե նորմի ուղղակի պարտադրման, այլ հավանականությունների դաշտի կազմակերպման միջոցով. վերահսկումն իրականացվում է տվյալների հավաքագրման, վարքագծային հետքերի վերլուծության և ռիսկերի գնահատման հիման վրա՝ դարձնելով կառավարելիությունը շարունակական և կանխատեսական գործընթաց:

Վերլուծվում է, որ նորմը կորցնում է իր ֆիքսված կարգավիճակը՝ վերածվելով դինամիկ վիճակագրական շեմի, իսկ վերահսկումը՝ դիտարկումից տեղափոխվում է

հաշվարկի և մոդելավորման դաշտ՝ ձևավորելով ապակենտրոնացված «ալգորիթմիկ պանօպտիկոն»:

Ցույց է տրվում, որ սուբյեկտայնությունը վերակազմավորվում է տվյալների լեզվով . սուբյեկտը ներկայանում է որպես դինամիկ պրոֆիլ, իսկ ինքնությունը՝ որպես մշտապես վերագրվող և վերագնահատվող կառուցվածք:

Այս համատեքստում ինքնակերտման տեխնոլոգիաները ինտեգրվում են կառավարելիության մեխանիզմներում՝ վերածվելով ինքնաչափման և ինքնաբարելավման (ինքնաօպտիմալացման) պրակտիկաների: Այս գործընթացում ձևավորվում է «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտը», որի ազատությունը սահմանվում է տվյալահեն և հաշվարկային գործակարգերի ներսում մանևրելու հնարավորությամբ:

Միաժամանակ հիմնավորվում է, որ ալգորիթմիկ կառավարելիությունը զարգացնում է կենսաքաղաքական և անվտանգության տրամաբանությունները՝ տեղափոխելով կառավարումը դեպի ապագա ռիսկերի կանխատեսում. սուբյեկտը կարող է սահմանափակվել ոչ թե իր կատարած արարքների, այլ իր հավանական վարքի հիման վրա, ինչը վերաիմաստավորում է պատասխանատվության դասական ըմբռնումները:

Ամփոփելով՝ ալգորիթմիկ կառավարելիությունը ներկայացնում է սուբյեկտայնության որակական վերակազմավորում, որտեղ կառավարումն իրականացվում է կանխատեսման և տվյալահեն մոդելավորման միջոցով, իսկ ազատությունը վերաիմաստավորվում է որպես սահմանափակ, բայց պահպանվող կարողություն՝ մանևրելու հավանականությունների դաշտում:

Երկրորդ գլխի հինգերորդ՝ **«Պատասխանատու փոխկախյալ սուբյեկտ. հետկենսաքաղաքական բարոյականության հնարավորությունը»** ենթագլխում քննության է առնվում բարոյականության վերաիմաստավորումը ալգորիթմիկ կառավարելիության պայմաններում, հիմնավորելով, որ սուբյեկտայնության տվյալահեն և կանխատեսական վերակազմավորումը խաթարում է դասական բարոյականության հիմքերը և պահանջում նոր բարոյական դիրքավորում:

Հիմնվելով Ֆուկոյի ուշ շրջանի վերլուծությունների վրա, որտեղ բարոյականությունը կապվում է ինքնակերտման (technologies of the self) և սուբյեկտայնացման պրակտիկաների հետ, ցույց է տրվում, որ ալգորիթմիկ կառավարելիության պայմաններում «ազատություն-ենթարկում» դասական հակադրությունը կորցնում է իր բացատրական ուժը: Սուբյեկտը գործում է նախապես կառուցված հավանականությունների դաշտում, որտեղ որոշումները միջնորդավորվում են տվյալահեն և մասամբ անթափանց մոդելներով, իսկ պատասխանատվությունը մասնատվում է ինքնաշխատ գործընթացներում:

Այս պայմաններում բարոյականության հիմքը տեղափոխվում է ինքնավարությունից դեպի փոխկախվածություն: Սուբյեկտը լիովին ինքնիշխան գործակալ չէ, սակայն ամբողջությամբ չի էլ տարալուծվում համակարգում: Այս սահմանային դիրքում առաջարկվում է «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» հայեցակարգը՝ իբրև բարոյական դիրք, որը հնարավոր է հենց տվյալահեն և միջնորդավորված հարաբերությունների պայմաններում:

Ցույց է տրվում, որ փոխկախվածությունը այստեղ ոչ թե նորմատիվ իդեալ է, այլ կառուցվածքային պայման, որը ձևավորվում է տվյալահեն գնահատման, դասակարգման և կանխատեսման մեխանիզմների միջոցով: Այս համատեքստում պատասխանատվությունը բխում է ոչ թե լիակատար վերահսկումից, այլ ներգրավվածության գիտակցումից:

Վերլուծվում է նաև, որ կանխատեսական կառավարելիության պայմաններում պատասխանատվությունը ստանում է ժամանակային նոր ձև՝ սուբյեկտը ներգրավվում է ոչ միայն անցյալ արարքների գնահատման, այլև ապագա ռիսկերի հաշվարկման գործընթացներում:

Միաժամանակ ալգորիթմիկ որոշումների անթափանցությունը ստեղծում է պատասխանատվության վակուում, որտեղ որոշումները ներկայանում են որպես տեխնիկական անհրաժեշտություն: Այս պայմաններում բարոյական դիրքավորումը բարդանում է, սակայն չի վերանում:

Այս համատեքստում պատասխանատու փոխկախյալ սուբյեկտը ոչ ինքնիշխան գործակալ է, ոչ էլ համակարգի կրավորական օբյեկտ, այլ ձևավորվում է սահմանափակ տեսանելիության ընդունման, փոխկախվածության ճանաչման և պատասխանատվության հարաբերական ընկալման միջոցով:

Ամփոփելով՝ ալգորիթմիկ կառավարելիության պայմաններում բարոյականությունը հնարավոր է ոչ թե ինքնիշխան սուբյեկտի մոդելի վերականգնմամբ, այլ պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի ձևավորմամբ, որի գործունեությունը դրսևորվում է որպես սահմանային, սակայն անհրաժեշտ պրակտիկա:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության արդյունքները, կատարվում տեսական ընդհանրացումներ, որոնց հիման վրա առանձնացվել են հետևյալ դրույթները՝

- Ֆուկոյի սուբյեկտի ոչ մարդաբանական հայեցակարգն ընդլայնվել է

ժամանակակից սոցիալ-տեխնոլոգիական պայմաններում՝ ցույց տալով, որ սուբյեկտի ձևավորումը 21-րդ դարում կառուցվում է ոչ միայն նորմալացման, այլև ապագայի հնարավորությունների հաշվարկի և կանխատեսման մեխանիզմների միջոցով:

- Ձևակերպվել և հիմնավորվել է ***«Ժամանակային կարգապահություն»***

հասկացությունը՝ որպես կարգապահական իշխանության ներքին ընդլայնում, երբ վերահսկողությունը տարածական կարգավորումից անցնում է դեպի ժամանակի կազմակերպում, ապագայի հաշվարկ և ռիսկերի կառավարում:

- Կենսաքաղաքական մոդելի ժամանակակից մեկնաբանությունների հիման վրա ատենախոսության մեջ արձանագրվել է, որ 21-րդ դարում կյանքի կարգավորումը համալրվում է տվյալահեն և ալգորիթմիկ մեխանիզմներով: Նշված գործընթացը համակարգված կերպով տեսականացվել է որպես ***«կանխատեսական կառավարելիության ռեժիմ»***, որը տարբերվում է դասական կենսաքաղաքականությունից իր կառուցվածքային շեշտադրումով: Հիմնավորվել է, որ այս ռեժիմում իշխանությունը գործում է ոչ միայն կարգավորող, այլև հաշվարկող և հավանականությունները կառավարող գործառույթներով:
- Հիմնավորվել է, որ ժամանակակից կառավարելիության պայմաններում վերահսկողությունը իրականացված վարքի վերահսկումից անցնում է դեպի կանխատեսելիության, ռիսկայնության և տվյալային պրոֆիլի կառավարման դաշտ, ինչի արդյունքում իշխանությունը կառուցվում է ոչ թե ներկայության (ներկայի), այլ հնարավորության կամ հնարավոր ապագայի հիման վրա:
- Ֆուկոյի ինքնակերտման տեխնոլոգիաների և սուբյեկտայնացման տեսության վերլուծության հիման վրա ատենախոսության մեջ ցույց է տրվել, որ ժամանակակից ալգորիթմիկ կառավարման պայմաններում սուբյեկտը չի վերանում, այլ վերակազմավորվում է նոր կառուցվածքային տրամաբանությամբ: Սուբյեկտի այս վերակազմավորումը սահմանվել է որպես «կառուցվածքային երկակիություն», երբ սուբյեկտը միաժամանակ և՛ կարգավորվող, և՛ ինքնակարգավորվող միավոր է: Հիմնավորվել է, որ ինքնատեխնոլոգիաները ներառվում են հաշվարկային և նորմատիվ միջավայրերի փոխազդեցության մեջ, և սուբյեկտայնությունը ձևավորվում է ոչ թե ինքնաբավ ինքնավարության հիման վրա, այլ հաշվարկային ռացիոնալությունների և սոցիալական նորմատիվության խաչմերուկում:
- Ցույց է տրվել, որ ժամանակակից պայմաններում սուբյեկտայնությունը վերակազմավորվում է որպես հավանականության և պատասխանատվության փոխկապակցված դաշտ, որտեղ ինքնությունը կառուցվում է հաշվարկային ռացիոնալությունների և սոցիալական նորմատիվության խաչմերուկում:
- Ֆուկոն դիմադրությունը մեկնաբանում է որպես իշխանության հարաբերությունների ներքին պայման՝ իշխանության ամեն հարաբերության մեջ ներառված հնարավոր հակազդեցություն: Ատենախոսության գիտական արդյունքը կայանում է նրանում, որ դիմադրության այս ֆուկոյան հայեցակարգը զարգացվել է ալգորիթմիկ և կանխատեսական կառավարելիության պայմաններում: Հիմնավորվել է, որ ժամանակակից հաշվարկային գործակարգերում դիմադրությունը կարող է գործել ոչ

միայն որպես իշխանության սահմանափակում կամ հակազդեցություն, այլ որպես կառավարման մեխանիզմների վերակազմավորման գործոն՝ ազդելով տվյալահեն նորմատիվության և հաշվարկային տրամաբանությունների կառուցվածքի վրա: Ուստի դիմադրությունը կանխատեսական միջավայրում գործողության մակարդակից անցնում է դեպի պայմանների մակարդակ՝ վերափոխելով այն հաշվարկային և նորմատիվ շրջանակները, որոնց մեջ ձևավորվում է սուբյեկտայնությունը: Այս զարգացմամբ սուբյեկտի բարոյական դիրքը վերաիմաստավորվում է ոչ թե սուվերեն ինքնավարության, այլ փոխադարձ կախվածության և երկարաժամկետ հետևանքների գիտակցության հիման վրա:

- Վերոնշյալ հիմքի վրա ձևակերպվեց «***պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի***» տեսական մոդելը՝ որպես հետկենսաքաղաքական բարոյականության հնարավոր հորիզոն: Ցույց տրվեց, որ այս մոդելում պատասխանատվությունը պայմանավորված է ոչ թե ինքնաբավ ինքնության հաստատմամբ, այլ փոխկապակից հարաբերությունների գիտակցմամբ և ապագայի նկատմամբ հաշվարկված պարտավորությամբ:

Այսպիսով՝ իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ Ֆուկոյի սուբյեկտի տեսությունն առ այսօր կենսունակ է ոչ միայն որպես պատմավերլուծական ծրագիր, այլև որպես մեթոդաբանական հարթություն. այն հնարավոր է համակարգված կերպով ընդլայնել՝ ժամանակակից կառավարելիության կառուցվածքային փոխակերպումները մեկնաբանելու համար: Ատենախոսության մեջ ֆուկոյան շրջանակը զարգացվել է երեք փոխկապակցված ուղղություններով. (ա) կարգապահական իշխանության մեջ տեսականորեն ձևակերպվել է «ժամանակային կարգապահությունը»՝ որպես վերահսկողության տեղաշարժ դեպի ապագայի հաշվարկ և ռիսկերի կառավարում, (բ) կենսաքաղաքական մոդելի վերաիմաստավորման միջոցով առաջարկվել է «կանխատեսական կառավարելիության ռեժիմ» հասկացությունը՝ ցույց տալով, որ կյանքի կարգավորումը համալրվում է տվյալահեն և ալգորիթմիկ մեխանիզմներով, և (գ) սուբյեկտայնության վերակազմավորումը մեկնաբանվել է որպես «կառուցվածքային երկակիություն», երբ սուբյեկտը միաժամանակ կարգավորվող և ինքնակարգավորվող միավոր է՝ ձևավորվելով հաշվարկային ռացիոնալությունների և սոցիալական նորմատիվության խաչմերուկում:

Այս ընդլայնումները թույլ են տալիս սուբյեկտի ձևավորման հիմնահարցը դիտարկել ոչ միայն կարգապահական և կենսաքաղաքական ռեժիմների շրջանակում, այլև հավանականության, ռիսկի և ապագայի կառավարման դաշտում, որտեղ վերահսկողությունը կառուցվում է հնարավորության վրա, իսկ ազատության ու պատասխանատվության սահմանները վերաձևավորվում են կանխատեսական տրամաբանությունների ներքո: Հետևաբար ֆուկոյան տեսությունը տվյալ ատենախոսության մեջ բնորոշվում է ոչ թե որպես փակ համակարգ, այլ որպես

աշխատող քննադատական մեթոդ, որի միջոցով հնարավոր է վերլուծել ժամանակակից տվյալահեն կառավարելիության պայմաններում սուբյեկտի վերաձևավորման տրամաբանությունները և դրանց բարոյական հետևանքները՝ ներառյալ «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» մոդելի հորիզոնը:

Ուստի ատենախոսության մեջ ցույց ենք տալիս, որ սուբյեկտի արդի ձևավորման հիմնական մարտահրավերն այլևս «ազատությունն ընդդեմ ճնշման» հակադրությունը չէ, այլ ապագայի հաշվարկի պայմաններում ազատության և պատասխանատվության նոր սահմանների որոշարկումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Margaryan, M., Harutyunyan, A., Petrosyan, S., Gevorgyan, A., & Sahakyan, H.**, Foucauldian Biopolitics and *Homo virtualis* in the Context of Anticipatory Governance, Algorithms, and Transhumanism// *Philosophies*, № 11(2), 54, 2026.
2. **Sahakyan H.**, Dispositif Dynamics: State Narratives and Counter-Memories in the Fabric of Collective Memory// Historia: philosophy & theory, Vol. 1, 2025, pp. 15-27.
3. **Sahakyan H., Gevorgyan A., Malkjyan A.**, From Disciplinary Societies to Algorithmic Control: Rethinking Foucault's Human Subject in the Digital Age// *Philosophies*, № *10* (4), 73, 2025.
4. **Սահակյան Հ.**, Հեղինակության գերակայություն. ազդեցությունն ու խոչընդոտները բովանդակության զարգացման վրա// «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 16, № 1 (46), 2025, էջ 32-44:
5. **Սահակյան Հ.,** Նեյրոտեխնոլոգիաներն իբրև կարգապահական իշխանության գործիք և սուբյեկտի ձևավորման միջոց. Միշել Ֆուկոյի համատեքստում// Առողջապահության և բժշկագիտության հայկական հանդես, № 5 (1), 2025, էջ 54-60:
6. **Սահակյան Հ.,** Հետարդիականության կենսաքաղաքական պարադոքսներ// Վէմ համահայկական հանդես, ԺԷ (ԻԳ) տարի, № 3 (91), 2025, էջ 20-42:
7. **Սահակյան Հ.**, Դիսկուրսը որպես հաղորդակցման սոցիալական համատեքստ. Միշել Ֆուկո// «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1, (16), 2015, էջ 15-27:

Саакян Айарпи Гагиковна

ПРОБЛЕМА СУБЪЕКТА В ФИЛОСОФИИ МИШЕЛЯ ФУКО

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по специальности 09.00.01 – “Философия”.

Защита состоится 10 июня 2026 г., в 15:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в Ереванском государственном университете по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а, ЕГУ

РЕЗЮМЕ

В истории философии проблема субъекта занимала центральное место и традиционно рассматривалась в рамках представления о нём как об автономном, самодостаточном и рационально организующем основании познания и действия. В классических концепциях субъект выступал в качестве исходного пункта, определяющего возможность знания, морали и социального порядка.

Однако в философии XX века данное представление подвергается существенной критике и переосмыслению. В работах Мишеля Фуко субъект рассматривается не как изначально заданная сущность, а как исторически формируемый результат дискурсивных, институциональных и властных практик. Субъект перестаёт быть исходной данностью и начинает пониматься как продукт определённых механизмов формирования и регулирования.

Анализ фукодианской концепции власти показывает, что власть не сводится к централизованному принуждению или запрету, а функционирует как сложная сеть отношений, пронизывающих социальную реальность и формирующих поведение, тело и способы самопонимания. В рамках дисциплинарной власти субъект конституируется посредством пространственной организации, наблюдения и нормализации, тогда как биополитическая власть ориентирована на регулирование жизни населения как совокупности биологических процессов.

Современные социально-технологические изменения обусловливают необходимость дальнейшего развития данной проблематики. В условиях цифровизации, распространения алгоритмических систем и данных как инструмента управления происходит смещение акцента с контроля фактического поведения на прогнозирование возможных действий, оценку рисков и управление вероятностями. В этих условиях субъект всё более включается в процессы измерения, классификации и профилирования, что трансформирует его статус и формы взаимодействия с властью.

В данном контексте проблема субъекта требует переосмысления не только в рамках дисциплинарных и биополитических моделей, но и с учётом новых форм управляемости, основанных на временной организации, предиктивных механизмах и данных. Субъект оказывается вовлечённым в процессы, где регулированию подлежит не только его настоящее поведение, но и потенциальные будущие действия.

Особое значение приобретает анализ взаимосвязи власти, свободы и сопротивления. В философии Фуко сопротивление понимается не как внешняя по отношению к власти сила, а как её неотъемлемый элемент, открывающий возможность трансформации существующих форм субъективности. В этом смысле субъект выступает не только как объект воздействия, но и как активный участник процессов самоформирования.

Таким образом, в диссертации обосновывается, что проблема субъекта в философии Мишеля Фуко приобретает особую актуальность в условиях современных социальных и технологических трансформаций, требующих пересмотра традиционных представлений о субъективности, свободе и ответственности. Субъект рассматривается как динамическая и изменчивая структура, формируемая в сложном взаимодействии властных механизмов, дискурсивных практик и процессов самоконституирования.

Sahakyan Hayarpi Gagik

THE PROBLEM OF THE SUBJECT IN THE PHILOSOPHY OF MICHEL FOUCAULT

Dissertation for the Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences under the specialty 09.00.01 “Philosophy”.

The defense will take place on June 10, 2026, at 15:00 at Yerevan State University, at the committee meeting of Philosophy and Sociology with the specialty of HCC 013
Address: 52a Abovyan str., Yerevan, 0025, YSU

ABSTRACT

The problem of the subject has traditionally occupied a central place in philosophical thought and has been understood within the framework of the subject as an autonomous, self-sufficient, and rational foundation of knowledge and action. In classical philosophy, the subject functioned as the primary point from which the possibility of knowledge, morality, and social order was derived.

However, in twentieth-century philosophy this understanding undergoes a significant transformation. In the works of Michel Foucault, the subject is no longer conceived as a given essence but as a historically constituted result of discursive, institutional, and power-related practices. The subject ceases to be an original foundation and is instead understood as an effect of specific mechanisms of formation and regulation.

The analysis of Foucault's concept of power demonstrates that power cannot be reduced to centralized coercion or prohibition but operates as a complex network of relations permeating social reality and shaping behavior, the body, and modes of self-understanding. Within disciplinary regimes, the subject is constituted through spatial organization, surveillance, and normalization, while biopolitical power is oriented toward the regulation of life processes at the level of populations.

Contemporary socio-technological transformations necessitate a further development of this problematic. In the context of digitalization, the spread of algorithmic systems, and the use of data as a tool of governance, there is a shift from the control of actual behavior to the prediction of possible actions, the assessment of risks, and the management of probabilities. Under these conditions, the subject becomes increasingly involved in processes of measurement, classification, and profiling, which transform its status and its relation to power.

In this context, the problem of the subject requires reconsideration not only within the framework of disciplinary and biopolitical models but also in light of emerging forms of governance based on temporal organization, predictive mechanisms, and data-driven regulation. The subject is thus situated within processes in which not only present behavior but also potential future actions become objects of control.

Particular attention is given to the relationship between power, freedom, and resistance. In Foucault's philosophy, resistance is not external to power but constitutes its inherent condition, opening the possibility for transformation. In this sense, the subject appears not only as an object of power but also as an active participant in processes of self-formation.

Thus, in the dissertation we argue that the problem of the subject in the philosophy of Michel Foucault acquires renewed relevance in the context of contemporary social and technological transformations, which call for a reconsideration of traditional conceptions of subjectivity, freedom, and responsibility. The subject is understood as a dynamic and evolving structure formed through the complex interaction of power mechanisms, discursive practices, and processes of self-constitution.